ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_27_» _փետրվարի_ 2020 թվական, N 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ԱԼԱՎԵՐԴԻ, ՔԱՂԱՔ ԱԼԱՎԵՐԴԻ, ԱԿՆԵՐ ԹԱՂԱՄԱՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.16 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամասի վարչական տարածքում գտնվող, Մովսես Յուրիկի Վահրամյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 0.16 հա, գործառնական նշանակության խոտհարքը /կադաստրային ծածկագիր՝ 06-002-0275-0015/ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:
2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման առաջարկությունների վերաբերյալ հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

Համայնքի ավագանու անդամներ՝

		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	Արթուր Դավթյան			

2.	Կամո	Երիցյան			
3.	Արմեն	Կարապետյան			
4.	Սեյրան	Հովհաննիսյան			
5.	Արայիկ	Ձավարյան			
6.	Հարություն	Ձավարյան			
7.	Լաուրա	Մելիքսեթյան			
8.	Ալիկ	Նասիբյան			
9.	Սվետլանա	Պետրոսյան			
10.	Վալերի	Վարոսյան			
11.	Վիգեն	Քառյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ